

ՔԱՐՈՉ ԽՈՍՎԱՎԵԼ

Տ. ԶԱՎԵՆ ԱԲԵՂԱ ԴԱԿՈԲՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱՎ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 հունվարի 2005 թ.)

Նախ հոգոս պարտքն եմ համարում Նոր դպրակա այս առաջին օրվա առիթով իմ շնորհավորանքները եղել ի մասնավորի, Վեհափառ Տեր, Ձեր Սրբությանը և մասթել կյանքի արեւադր և երջանիկ օրեր: Թող առավել արզասարեր դառնա ծեր հովվական ծանր, միաժամանակ քաղցր լուծը: Ինչպես նաև իմ շնորհավորանքները և բարեմաղթանքները հղում եմ ծեզ, սիրելի հոգևոր հայրեր և եղբայրներ, ի մասնավորի ծեզ, սիրելի հավաքացյալներ, որ, բողնելով փոնական սեղանները, նախ ներ եք ծեր ուխտը նորոգելու և աղոթք բարձրացնելու առ Աստված: Եվ ես, իրք պարարագի սպասավոր, մեր բոլորի աղոթքները, իրք մի-մի ծաղիկներ հավաքելով և ի մի բերելով, պիտի վերընծայեմ առ բարձրացն Աստված:

«Արդարեւ աւել ձեզ, զի այրին այն աղքատ աւելի արև քան զամենեսին»:

«Ճշմարիտ եւ ասում ձեզ, որ այդ աղքատ այրին ավելի զցեց, քան բոլորը»:

(Ղուկ. ԽԱ 3)

«Յանուն Նօր և Որդույ և Շոգույն Սրբոյ. ամէն»:

Այս խոսքերը թիչ առաջ հնչեցին այս Սուրբ Խորանից, և այս խոսքերը շուրջ երկու հազար դպրակի առաջ արդասանեց մեր Տերը՝ դիմելով իր առաջաներին: Եվ ես այս պահին մրածում եմ, թե մեր սուրբ հայրերը որքան պատշաճ և ինքնօրինակ ավելարաբանական ընթերցում են սահմանել Նոր դպրակա առաջին այս օրվա համար, որը ինքնաթնումի և վերարթնության հոյզեր է արթնացնում մեր հոգիներում:

Նուկաս ավելարանիջը պատմում է, թե մի անգամ Դիսուս, մինելով դպրակ, կանգնում է զանձանակի մուտ և դիմանում, թե ժողովուրդը, այդ քվում և մեծահարուսավներ մինելով դպրակ՝ բազում լումաներ են զցում զանձանակի մեջ, ոսկյա, արծաթյա դրամներ են զցում զանձանակի մեջ, և այդ պահին նկատում է նաև մի աղքատ այրի կնոջ, որ ընդամենը երկու լումա է զցում: Երկնավոր Վարդապետն ասում է, որ այդ աղքատ այրի կինն ավելի է զցել, քան բոլոր մեծահարուսավները, որովհետք նրանք իրենց կուրակած զանձերից են զցում Աստվուն ուղղված նվերների մեջ, իսկ այդ աղքատ և այրի կինը՝ իր ամբողջ ունեցածը:

Որպեսզի առավել հասու լինենք Քրիստոսի խոսքերին և առավել հաղորդ դառնանք ավելարաբանական իրողությանց, եկեք մի պահ միտովի դեղափոխվենք մեր Տիրոջ երկրային կյանքի ժամանակները: Դին Դրեասպան, դպրակա առաջիններ, մաքսավորներ, մեծահա-

բուսպները, որոնք մինում էին Ասլոն գաճար իրենց հալովոկ պիրմաշորք զգևաբներով և ուսկյա ու արծաթյա դրամներ էին զգում զանձանակի մեջ՝ ի վես բոլորի, և հարուկ զրնցոցով՝ ի լուր բոլորի, և նայում էին երկինք ու կարծես փառավորվում էին: Այս դրվագում ավելի գաճար միտումնավոր շեշտադրում է կնոջ աղքար լինելը և երկու լուսա զցելը, որը չզնաց, որովհետք ոչ ոսկի էր և ոչ արծաթ, և ոչ էլ նկարելի եղավ այլոց համար, բայց Տերն անմիջապես նկարում է: Ինչո՞ւ համար էր գաճարում դրվագ զանձանակը սրանից երկու հազար գաճար առաջ և այսօր է, կամ ինչո՞ւ համար մեր Տերը առանձնացրեց հայրկապես այրի կնոջ լուման:

Ողորմությունը Ասլոն կողմից հոգևոր օրենք է: Նվիրաբերությունը, ողորմածությունը հոգևոր ներքին դրամադրություններ են: Ողորմած մարդու արդարին ունեցվածքի հետ իր սիրով ու կամքը պիտի մարտուի, որովհետք ողորմությունը և ընծան այնժամ է ընդունելի, երբ սրբի ձեռքով է բաշխվում, քանզի Ասլոված ողորմությունը կամ ընծան չի ընդունում, եթե ձեռքը գաճար է, իսկ սիրով ափսոսում է: Ասլոված ոչ թե գաճարին է նայում, այլ դվյուի սրբին: Ողորմությունը և նվիրաբվությունն Ասլոն արդար բարիքների բաժանման միջոց է և, ինչպես Դոդոս առաջյան է ասում, «Չեր առաքությունը թող լցնի նրանց պակասությունը և նրանց առաքությունն էլ թող լցնի Չեր պակասությունը»: Եվ, ինչպես գրված է Շին Օրենքում, «Ով շաք հավաքնե, ոչինչ ավելի ջունեցավ, և ով թիւ, նրան երբեք չպակասեց»:

Իրապես, նվիրաբվությունը և ողորմությունն այն առաջինություններից են, որոնցով մարդիկ զանձեր են ամբարում երկնքում, որ ոչ գողն է մերձենում և ոչ ցեցն է ապականում: Մի հետ արևելյան առած պարմում է, որ այս աշխարհի վրա մի շաբ մեծահարուսար մարդ էր ապրում, և երբ այս մարդը մահանում է, երեշտակը նրան ուղեկցում է: Ճանապարհին նրանք շաբ մեծ դներ են դնենում, և հանկարծ մի շաբ շրեղաշորք գուն է դիմում այդ մեծահարուսարը, որը նաև նման էր իր գաճար, և ակամայից հարցնում է երեշտակին, թե ով է ապրում այս գաճարը: Եվ երեշտակի պատրասխանից պարզվում է, որ ճիշդ այս մեծահարուսարի ծառաներից մեկն է ապրում այդ գաճարը: Եվ մեծահարուսարն իր միքում ասում է: «Եթե իմ ծառային այսպես այսպես պահում են, ապա որքան առավել իմը կլինի»: Եվ թիւ առաջանալով, երեշտակը ցույց է գալիս նրան մի փոքրիկ խրճիթ և ասում է, որ այսպես դու պիտի ապրեան:

Հարուսարը երբ զարմանում է, երեշտակը նրան պակասիսանում է: «Վյարել մենք դնենք կառուցում ենք ծեր իսկ ուղարկած նյութերով, որոնք են ողորմությունը, բարեգործությունը և սրանց նման շաբ բարի և առաջինի զորենք, բայց հարուսար լինելը բնավ էլ վար բան չէ, եթե Ասլոնոց գրված այդ բարօրությունը զնահապել զիտես և կարողանում են բաժնեկից դարձնել կարուպյաներին և նրանց պակասությունները լցնել քո առաքությամբ և դրանով հոգևոր անանց զանձեր ծեռք բերել երկնքում, այլապես ամեն ինչ ունայն է դառնում, ինչպես բանաձնում է իմաստուն Սողոմոնն իրեն փորձելով ամեն ինչի մեջ, այդ թվում նաև՝ հարսարության»:

Իրապես, որևէ ծեռքբերում դադարէ է և ունայն, եթե այնպես չկա ընդհանուրի կյանքը բարելավելու և մարդկության կյանքը լավացնելու ասրվածային պարվիրանը: Մարդու կյանքում խորհրդագունքն շաբ են լինում, բայց ամենամեծ խորհրդագունքն օրն է, քանզի ամեն օրն իր խորհուրդն ունի:

Այսօր Ամանոր է: Ի՞նչ է այսօրվա խորհուրդը, ի՞նչ է հուշում մեզ Ամանորը: Այս օրերին մենք զանազան հանդիսությունների, բազում խրախճանքների ենք մասնակցում, իսկ ի՞նչ հուշ է մնում մեր սրբերում, ի՞նչ նորություն է ծնվում մեր հոգում: Ահա կարևոր հարցադրումներ, որոնց պատճառաբանները եթև չունենանք, ապա ապարդյուն պիտի անցնեն մեր բոլոր փորձերը նորություն գիտնելու 2005 թ. կրող այս դարում: Անցյալ դարենութիւն Վեհափառ Հայրապետին իր պարգամի մեջ այսպես բանաձեւեց. «Այս օրերին բոլոր մեկմեկու նվերներ եք փոխանցում, բայց դուք փոխանցեք ամենաազմիվը՝ սերը և հոյսը»:

Իրավամբ, Ամանորի և Սուրբ Ծննդյան հանդիսությունների և խոհերի մեջ հավիտենականության և հավերժի շունչը կա: Վսպիսի սրբազին խոհերով և հոգևոր զգացումներով է, որ հայր դիմավիրել է իր Նոր դարին և Սուրբ Ծնունդը: Աղոթում եմ, որ Նոր դարվա այս առավոտքը և Սուրբ Ծննդյան հուսաբեր լույսը հավեր պայծառ մնան մեր Հայրենիքի, մեր ժողովրդի և մեր Եկեղեցու մեջ: Թող 2005 թ. լինի բովանդակ աշխարհի և ի մասնավորի՝ հայ ազգի համար խաղաղության, համերաշխության, միասնության և անվտանգության դարի: Թող նորաբաց այս դարին լինի մեր Սուրբ Եկեղեցու համար հոգևոր նոր ձեռքբությունների, խաղաղ և հոգեշահ աշխաբանքի արգասաբեր դարի, որպեսզի կարողանանք հայ ժողովրդի հոգևոր և ազգային զանձանակի մեջ մեր լուման զցել, որովհետք այսօր Քրիստոս կրկին կանգնած է զանձանակի մոտ և նայում է, թև մեզնից յուրաքանչյուրն ինչ է զցում այնքենակ և ինչ սրբով է զցում:

Թող Ասպծո սերը, մեր Տիրոց խաղաղությունը և Սուրբ Շողու շնորհը միշտ մեզ բոլորին հետ լինեն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: